ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան 0010, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ,
Հեռ.՝+37491700974,**Էլ. հասցե՝**foi@foi.am, **www.foi.am**

18.09.2023
351-76

«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ
տնօրինության նախագահ, գործադիր տնօրեն Արտակ Միրզոյան

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Միրզոյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք հայտնել

1. Արդյո՞ք «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ-ն 2021, 2022 և 2023 թվականներին ապահովագրել է Ռուսաստանի Դաշնություն կամ Բելառուս «Երկակի նշանակության ապրանքների արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին» ՀՀ օրենքի իմաստով հսկվող ապրանքների կամ «Հայաստանի Հանրապետությունից արտահանվող և Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրվող զգայուն ապրանքների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության՝ 2023 թվականի մայիսի 25-ի N 808-Ն որոշմամբ սահմանված զգայուն ապրանքների արտահանում:
2. Եթե այո, ապա նույն տարիներին վերոնշյալ երկրներից յուրաքանչյուր հսկվող ապրանքների քանի՞ արտահանում է ապահովագրվել՝ ըստ տարիների:
3. Վերոնշյալ երկրներից յուրաքանչյուր զգայուն ապրանքների քանի՞ արտահանում է ապահովագրվել՝ ՀՀ կառավարության վերոնշյալ որոշման ուժի մեջ մտնելուց մինչ օրս:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան